ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 93-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՆՍՆԱԳԼԽԱՔԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 2020 թվականի անասնագլխաքանակի հաշվառման համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) Արտակ Ադամյան -հանձնաժողովի նախագահ, Լեռնանիստ համայնքի ղեկավարի տեղակալ
2) Հովհաննես Մարգարյան - հանձնաժողովի քարտուղար , աշխատակազմի քարտուղար
3) Նորա Գևորգյան -հանձնաժողովի անդամ, աշխատակազմի առաջատար մասնագետ- հաշվապահ
4) Էլյանորա Հայրապետյան - հանձնաժողովի անդամ, աշխատակազմի առաջատար մասնագետ-գանձապահ
5) Սոֆիկ Աբրահամյան - հանձնաժողովի անդամ , աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
6) Լուսիկ Հակոբյան - հանձնաժողովի անդամ, աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
7) Սուսաննա Սարգսյան - հանձնաժողովի անդամ, աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ
8) Գեղեցիկ Երեմյան - հանձնաժողովի անդամ , գործավար
9) Նորիկ Հարությունյան - հանձնաժողովի անդամ, համայնքի անասնաբույժ

2. Հանձնարարել հանձնաժողովի քարտուղար Հովհաննես Մարգարյանին՝ 2020 թվականի դեկտեմբերի 17-ից մինչև ս/թ-ի դեկտեմբերի 25-ը ներառյալ Լեռնանիստ համայնքում պատշաճ մակարդակով անցկացնել անասնագլխաքանակի հաշվառում:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 14
գ.Լեռնանիստ

√

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 94-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 10-րդ, 11-րդ, 17-րդ կետերի և 18-րդ կետի գ) ենթակետի, հիմք ընդունելով Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանի կողմից 2020 թվականի դեկտեմբերի 9-ի Լեռնանիստ համայնքի ղեկավարին ներկայացված դիմումը, և այն հանգամանքը, որ դիմումի առարկա ինքնակամ կառույցը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք, նաև դրանց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը և վտանգ չի ներկայացնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց թիվ 101 հասցեում գտնվող Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանին սեփականության իրավունքով պատկանող 07-033-0225-0009 կադաստրային ծածկագրով 0.594 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակությամբ հողամասի վրա ինքնակամ կառուցված արտադրական նշանակության 83.98 քմ արտաքին մակերեսով շինությունը ճանաչել օրինական՝ համաձայն ներկայացված դիմումի և կազմված հատակագծի :
2. Կառուցապատումն իրականացրած անձի՝ Գեղամ Վասպուրականի Զոհրաբյանի կողմից 60 օրյա ժամկետում Լեռնանիստ համայնքի բյուջեի 900125008202 հաշվին օրինականացման ընդհանուր գումարը՝ 69283,5/ վաթսունինը հազար երկու հարյուր ութսուներեք դրամ հիսուն լումա/ ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարել ուժը կորցրած:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

2020 թ. դեկտեմբերի 14
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 95-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱՉԻԿ ՋԻՎԱՆԻ ԳԱԼՍՏՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչիկ Ջիվանի Գալստյանի դիմումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետություն կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> 2002 թվականի դեկտեմբերի 25-ի օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ կադաստրային քարտեզագրման արդյունքում Խաչիկ Ջիվանի Գալստյանի կողմից փաստացի օգտագործվող հողամասերը նախատեսված չեն այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, ընդգրկված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, չեն ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական, պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ճանաչել Խաչիկ Ջիվանի Գալստյանի սեփականության իրավունքը ըստ կադաստրային քարտեզագրման արդյունքի, կադաստրային 07-033-0109-0006 ծածկագրով փաստացի օգտագործվող 0,08 հա մակերեսով և կադաստրային 07-033-0109-0036 ծածկագրով փաստացի օգտոգործվող 0,073 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերի նկատմամբ, որոնք փաստացի օգտագործվել են նրա կողմից մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Հողամասերի սահմանները որոշվում են <<ԳԵՈԼԵՆԴ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Լեռնանիստ համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:

3. Լեռնանիստ համայնքի բնակիչ Խաչիկ Ջիվանի Գալստյանին պատկանող կադաստրային 07-033-0109-0006 ծածկագրով 0,08 հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց 2-րդ նրբանցք 1-ին փակուղի թիվ 30, իսկ կադաստրային 07-033-0109-0036 ծածկագրով 0,073 հա մակերեսով հողամասին տրամադրել

հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց 2-րդ նրբանցք 2-րդ փակուղի թիվ 26:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանմանը գրանցել Լեռնանիստ համայնքի բնակիչ Խաչիկ Ջիվանի Գալստյանի սեփականության իրավունքը ամրագրված հողամասերի նկատմամբ և տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականներ:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20 թ դեկտեմբերի 14

գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք, ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Լեռնանիստ, 1-ին փող, շենք 52,
Հեռ. /094-55-33-04 , lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2020 թվականի N 96-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին » օրենքի 42 հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի , Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի, հիմք ընդունելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած նախագծային փաստաթղթերը և դիմումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Համաձայնեցնել կառուցապատող՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացրած <<Վոլիոս նախագծային ինստիտուտ>> փակ բաժնետիրական ընկերության կողմից կազմված նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող Յուրի Ամասիայի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում 0,4 կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2. Պարտավորեցնել կառուցապատողին շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
Լեռնանիստ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 97-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով դիմումատուի հայտը և Լեռնանիստ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 5-ի N 48-Ն որոշմամբ հաստատված հավելվածը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 1-ին փողոց թիվ 16 հասցեում գտնվող առևտրի սրահում գործունեություն ծավալող անհատ ձեռնարկատեր՝ Կարեն Ատոմի Հակոբյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20թ. դեկտեմբերի 18
գ.Լեռնանիստ